

տինի. բայց հմուտ պատմաբանին ծանօթ էր որ սոյն տեղը յիշուած յարգելի անձին բնակարանը ըլլալէ շատ առաջ, այս յիշատակարանը կառուցուած էր ի յիշատակ պարսիկ վկայ Յակովկի որ կը կոչուէր Շէյխ Եագուպ Կի-Սահմի, և թէ այս հիմնարկութիւնը Բուսնեբու ժամանակ տեղի ունեցած է:

Միւսձիր էտ-տինի սովորական բառագիտութեան մէջ ռումբառը կը նշանակէ բիւզանդական թուականի յոյները. այսպէս է ընդհանրապէս իր թանկագին ճշգրտանութիւնը որով Clermont-Ganneau՝ համաձայն այս տեղեկութեան՝ կ'եզրակացնէ Եագուպի բիւզանդական ծագումը: Եւ որովհետեւ Բրօֆ. Schick նոյն շինութեան ամբողջական յատակագիծը հրատարակելով՝ սա կարծիքը կը յայտնէր թէ՝ «ան խիստ հաւանականութեամբ Սալահրաց թուականին կը պատկանէր». գիտնական վարպետը չէր վարաներ եզրակացնել թէ՝ «այս կարծիքը շատ ընդունելի չէր կրնար ըլլալ՝ Միւսձիր էտ-տինի վճռական հաւաստումին հանդէպ»: Ո՛չ ինքը և ոչ ալ Schick չէին կրցած քննութեան առնել բիւզանդական և միջինդարեան ճարտարապետական նիւթերու մէջ աւելի քան այն խիստ դատաւորը որ 1860ին՝ կը գրէր թէ «Այս փոքր եկեղեցին Սալահրաց ժամանակին կը վերաբերէր»: Շէյնքը երբ մեր առջեւ կը գտնուի՝ դժուարին է այսպէս վճարար արժեքնել Միւսձիր էտ-տինի հաւաստիքը De Voguéի խիստ գնահատելի ճարտարապետական կարծիքին և Schickի համակարծիք տպաւորութեան դէմ: Ի բաց առնելով նախնական հիմնարկութիւնը, Միջին դարու լատին դրոշմը կարելի չէ տարակուսի տակ ձգել:

Յատակագիծը շատ պարզ է. Պաղեստինի մէջ ֆրանկ ժամանակաշրջանին բազմաթիւ եկեղեցիներու յատակագծին կը նմանի. այսինքն երկայնի փոքրիկ գաւիթ մը ունի, արեւելքի կողմը նեղցուած է և թեթևակի խորացած՝ կիսաշրջանակի ձևով կողակին առջեւ տեսակ մը դասի վերնատուն հաստատելու համար: Այս կողակը խնամեալ շինուածքի մը մէջ կրկնակոր (cul-de-four) կամար մը ունի: Բոլորաձև անկանոն ցած կամար մը այժմ կը ծածկէ եկեղեցիին մնացորդը, բայց շատ տարակուսական չէ որ ա՛ն աւելի կամ նուազ ուշ կերպով յաջորդած է աւելի բարձր, բոլորաձև կամ որրանաձև կամարի մը: Այս կարծիքին ապացոյցը պիտի գտնուի ա՛յն յարաբերութեան մէջ զոր